



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 31074
Յունիս 25, 1990

Հոգեշնորհ
Տ. Շնորհը Ծ. Վրդ. Գասպարեան
Հովի Ս. Շողակաթ Եկեղեցւոյ
Պէլվիլ.

Սիրելի Հայր Շնորհը,

Ժամանակին ստացած ենք Դեկտեմբեր 17, 1989 թուակիր ձեր նամակը, որով արտօնութիւն կը խնդրէք, իրենց շրջանը աւարտած, Տիարք Լէճ Մուրատեանի եւ Հրանդ Նորսիկեանի անունները աւելցնել Ծխական Խորհուրդի թեկնածուներու ցանկին վրայ՝ որպէս վերընտրելի:

Նկատի ունենալով ձեր ներկայացուցած մտահոգութիւնն ու պատճառարանութիւնը, այսու գիրով կ'արտօնենք որ վերոյիշեալներուն անունները աւելցուին ցանկին վրայ եւ անոնք իրաւոնք ունենան վերընտրուելու:

Սիրոյ ողջունի

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ
Առաջնորդ

Ա. ԹՈՂԱԿԱԹ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻ


Հովհաննես Ս. Շնորհի Ռ. Վ. Գրդ. Գալապարեան

Holy Shoghagat

ARMENIAN APOSTOLIC CHURCH

400 HUNTWOOD ROAD + BELLEVILLE, ILLINOIS 62221 + 618-277-6400

VERY REV. SHNORK KASPARIAN, PASTOR



17 Դեկտեմբեր, 1989.

Բարձրաշնորհ
Տ. Թողարքում Ս. Արք. Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց
Ամերիկայի Արեւելեան Թեմին
Նիւ Եղբայր.

Գերաշնորհ Սրբազն Հայր,

Մարտ 15, 1989 թուակիր նամակով տեղեկացուցած էի Ձեզի թէ Ծուխիս
անդամներուն նուազութեան եւ թեկնածուներու չգոյութեան պատճառով, անցնալ
տարի ստիպուած եղանք Ծիական Խորհուրդի անդամներուն թիւը եօթնի իշեցնել
փոխանակ ինն պահելու: Յատուկ ջանք կատարեցինք այս տարի որպէսզի կրկին
ինը հոգի ունենանք եւ ուրախ եմ ըսելու որ յաջողեցանք: Մակայն երկու
անձերու շրջանը վերջացած ըլլալով վերընտրելի չեն:

Ուստի, նեկայիւս կուգամ խնդրել Ձերդ Սրբազնութենէն որպէսզի
համաձայն նանոնադրութեան 26-րդ յօդուածին, բարեհաճէիք արտօնել երկու
անդամներու վերընտրութիւնը, նկատի առնելով պատիկ Ծուխ լինելու պարագան:
Այդ երկու անձերն են, Լէն Մուրատեան եւ Հրանդ Խորսիկեան, որոնք խիստ
օգտակար եւ կարեւոր տարրերը կը կազմեն փոքրաթիւ նուիրեալ ներուն մէջ:

Կանխայայտ շնորհակալութեամբ սպասելով Ձեր գրութեան, կը մնամ խորին
յարգանօք եւ ի համբոյր Սրբազնութեանդ Ս. Աջոյն:

Շնորհակալ Ս. Վ. Գրդ. Գալապարեան
ՀՈԳԵԵՒՈՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ